

ՄԵԿԵՆԱՐԿԵԼ Է 'ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ' ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

04.02.2014 12:36



ՀՀ փաստաբանների պալատը այսօր՝ փետրվարի 4-ին, մեկնակել է 'Սիրիահայերին իրավական օգնության' փաստաբանական ծրագիրը: Այդ կապակցությամբ 'Արմենպրեսս' պետական լրատվական գործակալության մամուլի ակումբում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինավոր Մեղրյանը ներկայացրել է ծրագրի մանրամասները:

Պալատն անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրելու Հայաստանում ապաստանած սիրիահայերին: Ըստ Մեղրյանի, **‘Առաջին փուլով Փաստաբանների պալատում իրականացվելու է սիրիահայերի իրավագիտության բարձրացմանն ուղղված անվճար իրավաբանական խորհրդատվություն: Երկրորդ փուլով սիրիահայերին հուզող հարցերի շրջանակը կամփոփվի արևելահայերեն ու արևմտահայերեն ձեռնարկում, որն անվճար կտարածվի սիրիահայերի շրջանում’**:

Զինավոր Մեղրյանը անդրադառնալով սիրահայերին հուզող խնդիրներին՝ նշել է, որ **‘Դրանց շրջանակը շատ լայն է՝ անշարժ գույքի վարձակալման փաստաթղթերի ձևակերպումից մինչև վարորդական իրավունքի վկայականի ստացում: Վստահ եմ, որ այս խորհրդատվության արդյունքում սիրիահայերին հուզող հարցերի շրջանակն էլ ավելի կընդլայնվի’**:

‘Ֆեյսբուք’ սոցիալական ցանցում ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատի «Սիրիահայերին իրավական աջակցություն» ծրագիր (<https://www.facebook.com/groups/566725576751267/>):



Սիրիահայ այն հայրենակիցները, ովքեր չեն կարողանա այցելել Փաստաբանների պալատ, նրանք հարցերը կարող են գրառում կատարել խմբում և կստանան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Նշենք, որ օրեր առաջ ՀՀ փաստաբանների պալատում նախագահ Արա Զոհրաբյանը և ծրագրի համակարգողները հանդիպել են շուրջ 30

սիրիահայերի և նրանց հետ քննարկել ծրագրի
մանրամասները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```